ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

✉ գ. Լոռի Բերդ, Աշոտ երկաթի 7
✆ 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

թիվ 190
« 27 » մարտի 2018թ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան.

Ձեզ եմ ներկայացնում Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 2018թ. թիվ 25Ա և 26Ա որոշումները:

Առդիր՝ 1 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կատ. Ա. Մարտիրոսյան
հեռ/ 094-34-70-38

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 17 » մարտի 2018թ. № 25-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 2003թ. ապրիլի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» թիվ 384-Ն և ՀՀ կառավարության 2003թ. նոյեմբերի 13-ի «Քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ստեղծման, նախապատրաստման նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» թիվ 1532-Ն որոշման՝

որոշում եմ.

1. Լոռի Բերդ համայնքում ստեղծել քաղաքացիական պաշտպանության (այսուհետ՝ ՔՊ) շտաբ:

2. ՔՊ շտաբի պետ նշանակել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արթուր Վարդանյանին:

3. ՔՊ շտաբի պետին՝

1) Մշակել և մինչև 2018թ. մարտի 31-ը իմ հաստատմանը ներկայացնել համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը:

4. Լոռի Բերդ համայնքում ստեղծել տարահանման հանձնաժողով և համայնքային հետևյալ քաղաքացիական պաշտպանության ծառայությունները՝ համապատասխանաբար նշանակելով ղեկավարներ.

1) տարահանման հանձնաժողով, նախագահ՝ համայնքի ղեկավարի տեղակալ Էդուարդ Մելիքսեթյանին.

2) կապի և ազդարարման ծառայություն, պետ՝ համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ Անի Մարտիրոսյանին,

3) ինժեներական ծառայություն, պետ՝ համայնքի ղեկավարի օգնական Խաչատուր Բալայանին,

4) բժշկական ծառայություն, պետ՝ Ուռուտի ԱԱՊԿ ՊՈԱԿ-ի ընտանեկան բժիշկ – տնօրեն Սիլվա Մարգարյանին,

5) տրանսպորտային ծառայություն, պետ՝ համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Արա Չոբանյանին,

6) առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման միասնական ծառայություն, պետ՝ համայնքապետարանի տնտեսվար Տիգրան Ներսիսյանին,

7) հասարակական կարգի պահպանման ծառայություն, պետ՝ համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Մարգարիտա Հովսեփյանին,

8) կոմունալ-տեխնիկական ծառայություն, պետ՝ համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Քրիստինե Մելիքջանյանին,

9) բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայություն, պետ՝ Բովաձոր բնակավայրի գանձող Արմեն Մարգարյանին:

5. Լոռի Բերդ համայնքում ստեղծել հետևյալ կազմավորումները՝ համապատասխանաբար նշանակելով հրամանատարներ.

1) փրկարարական խումբ, հրամանատար՝ Լեջան բնակավայրի գանձող Արսեն Սախլյանին,

2) կապի օղակ, հրամանատար՝ Լեջան բնակավայրի օպերատոր, աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ Արթուր Մեսրոպյանին,

3) հակահրդեհային խումբ, հրամանատար՝ Սվերդլով բնակավայրի գանձող Անդրանիկ Այվազյանին,

4) հրատապ բուժօգնության օղակ, հրամանատար՝ Ագարակ բնակավայրի բժիշկ-թերապևտ Սուսաննա Մամաջանյանին,

5) հասարակական կարգի պահպանման խումբ, հրամանատար՝ համայնքապետարանի վարորդ Խորեն Ներսեսյանին,

6) հետախուզական խումբ, հրամանատար՝ համայնքապետարանի վարորդ Գարեգին Ավետիսյանին:

6. Համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայությունների պետերին՝ երկշաբաթյա ժամկետում մշակել և իմ հաստատմանը ներկայացնել ծառայության կանոնադրությունը, նախապես այն համաձայնեցնելով մարզային քաղաքացիական պաշտպանության համապատասխան ծառայության և Լոռու մարզային փրկարարական վարչության հետ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.Տ.

2018թ. մարտի 17
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 26 » մարտի 2018թ. № 26-Ա

ԼԵՋԱՆ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՀԱՅԿ ԺՈՐԻԿԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի պահանջներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հաստատել Լեջան գյուղի բնակիչ՝ Հայկ Ժորիկի Մարգարյանին պատկանող՝ բնակելի տանը (կադաստրային համարը 06-038-034-002-001 , հողամասի կադաստրային համարը 06-038-034-002) տրված՝ գ. Լեջան, 14-րդ փողոց, 1-ին նրբ., տուն 1 հասցեն:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.տ

2018թ. մարտի 26
գ. Լոռի Բերդ